Պարոն/Տիկին Ա. Ոլիխանյանին, Հ. Ղազարյանին,
Զ. Ստեփանյանին
ստորաբաժանման ղեկավարի անուն, ազգանուն

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի գլխավոր քարտուղար պարոն Ա.Սաֆարյանին

Խնդրում եմ տեղեկացնել հանձնաժողովի անդամներին, աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներին, ինչպես նաև նախապատրաստել հակիրճ զեկույց՝ գործակարգավար. խորհրդակցությանը ներկայացնելու համար

Տիկին Ն.Գաբրիելյանին՝ Ի գիտություն

Ա.Սաֆարյան

« 5 » փետրվարի 2024թ.

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. **Քաղաքացիական ծառայողի անունը, ազգանունը՝**

– Անուշիկ Աղինյան,

– Ռիմա Գրիգորյան,

– Լիլիթ Երեմյան:

2.Զբաղեցրած պաշտոնը՝ ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի՝

- իրավաբանական և լիցենզավորման վարչության իրավաբանական և դատական սպասարկման բաժնի գլխավոր իրավաբան,

- միջազգային համագործակցության բաժնի գլխավոր մասնագետ,

- սակագնային քաղաքականության վարչության սակագնային բաժնի գլխավոր մասնագետ:

3.Գործուղման վայրը և ժամկետները՝ ք. Տիրանա (Ալբանիա), 2024 թվականի հունվարի 29-31:

4.Հրավիրող կողմը (առկայության դեպքում)՝ ԱՄՆ միջազգային զարգացման գործակալություն (USAID), ԱՄՆ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովների անդամների ազգային ասոցացիա (NARUC):

5.Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝ մասնակցել «Առաջադեմ կին առաջնորդները էներգետիկայում» նախաձեռնության շրջանակում կայանալիք գենդերային հավասարության և սոցիալական ներառման (GESI) իրազեկման վերաբերյալ անհատական դասընթացին:

6.Քննարկված թեմաները (հարցերը)՝ Դասընթացի առաջին օրը՝ հունվարի 29-ին, ներկայացվել են գենդերային հավասարությունը, բազմազանությունը և ներառականությունը: Մասնակիցները, բաժանվելով փոքր խմբերի, քննարկել են գենդերային տարբերությունները և ներկայացրել այլ սոցիալական անհավասարությունների վերաբերյալ իրենց անձնական պատկերացումները: Քննարկվել են անձի ինքնությունը, դրա վրա ազդող գործոնները և գործոնների ազդեցության արդյունքում անձի ինքնության փոփոխությունները, առկա խտրական մոտեցումները և դրանց կապը գործող հայրիշխանական մոտեցումների հետ, թե ինչպես նույն ինքնություն ունեցող մարդկանց վրա կարող են տարբեր կերպ ազդել իրենց հետ հատվող ինքնությունները, ինչպես մարդիկ կարող են զգալ բացառում կամ խտրականություն տարբեր ինքնությունների համատեքստում: Նիստի ընթացքում մասնակիցները հնարավորություն են ստացել ուսումնասիրել և քննարկել, թե տարբեր սոցիալական հաստատություններ, ինչպիսիք են ընտանիքը, դպրոցը, աշխատավայրը և լրատվամիջոցները, ինչպիսի դերակատարում ունեն գենդերային նորմերի ձևավորման և հաստատման գործում: Դասընթացի 2-րդ օրը՝ հունվարի 30-ին, ներկայացվել են կրոնի և մշակույթի դերը հասարակության կյանքում, իշխանության տարբեր ձևերը և թե ինչպես են դրանք ազդում անհատների և աշխատավայրի վրա: Քննարկվել են արտոնությունները և դրանց ազդեցությունը մարդկանց և աշխատանքային գործընթացի վրա: Քննարկվել են հասարակության կողմից կանանց և տղամարդկանց աշխատանքի տեսակները՝ թե՛ վճարովի, թե՛ չվճարվող, և թե ինչպես է դա հանգեցնում տղամարդկանց, կանանց և այլ մարգինալացված ինքնությունների առաջնորդության հնարավորությունների և իրավունքների անհավասար հասանելիությանը: Ինչպես անհատական, այնպես էլ խմբակային աշխատանքների ընթացքում մասնակիցները իրականացրել են քննարկումներ, թե ինչպես են գենդերային դերերը և մարգինալացումը ազդում կանանց առաջնորդության հնարավորությունների և իրենց հանձնաժողովներում որոշումներ կայացնելու իրավունքի վրա: Դասընթացի 3-րդ օրը՝ հունվարի 31-ին, քննարկվել է, թե ինչպես հավասարության և ներառականության պրակտիկան կարող է մեղմել իշխանության անհավասար բաշխվածությունը: Ներկայացվել են քաղաքականությունների մշակման գործընթացում դրանց արդյունավետության գնահատման չափանիշներ և տարբերակներ: Այնուհետև խմբային աշխատանքների միջոցով մասնակիցները փորձել են ներկայացնել իրենց գործողությունների պլանը, և թե ինչպես են օգտագործում GESI-ի մոտեցումները իրենց հանձնաժողովներում հետագայում ավելի ներառական մոտեցում կիրառելու համար:

Հանդիպումները, ելույթները՝ մասնակիցների և բանախոսների հետ դասընթացի ընթացքում տեղի են ունեցել քննարկումներ ներկայացված թեմաների վերաբերյալ (հարց ու պատասխան), ինչպես նաև բոլոր մասնակիցները ներկայացրել են իրենց երկրում առկա պրակտիկան: Բանախոսները քննարկվող թեմաների վերաբերյալ ներկայացրել են տեղեկատվություն տարբեր երկրների փորձի վերաբերյալ, ներկայացրել են իրենց գործողությունների պլանի իրականացման հետագա քայլերը, կատարման ժամկետները:

8.Հանդիպումների ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝ Շարունակել աշխատանքները՝ յուրաքանչյուրն իր հանձնաժողովի շրջանակում՝ իրականացնելու և վերահսկելու գործողությունների պլանը՝ ստանալով NARUC-ի անձնակազմի և փորձագետ-կամավորների աջակցությունը:

Հաշվի առնելով հետագա համագործակցությունը ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության (USAID), ԱՄՆ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովների անդամների ազգային ասոցացիայի (NARUC) հետ՝ նախատեսվում է առաջիկայում նոր դասընթացների կազմակերպում և մասնակցություն:

9.Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝ Ակնկալվում է առաջիկա 6 ամիսների ընթացքում ներկայացնել գործողությունների պլանի նախագիծը՝ ուսումնասիրելով միջազգային փորձը և կիրառելով դասընթացների ընթացքում ձեռք բերված գիտելիքները, ինչպես նաև մշակված գործողությունների ծրագրի արդյունքում համապատասխան կարգավորող մարմիններում կիրառել ներառական քաղաքականությունը:

Գործուղվող ---------- 05.02.24թ. ---------- ***Ա. Աղինյան***
(ստորագրությունը, ամսաթիվը)

Գործուղվող ---------- 05.02.24թ. ---------- ***Ռ. Գրիգորյան***
(ստորագրությունը, ամսաթիվը)

Գործուղվող ---------- 05.02.24թ. ---------- ***Լ. Երեմյան***
(ստորագրությունը, ամսաթիվը)

Հավելված N 3

ՀՀ վարչապետի 2018 թ.

սեպտեմբերի 19-ի N 1230-Ն

որոշման

Օրինակելի ձև

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐՁՆԱՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ

1. Մարմնի անվանումը Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով

2.Գործուղման մասին իրավական ակտի համարը Հրաման 013-ԳՔ, 12.01.2024թ., 029-ԳՔ, 26.01.2024թ.

3. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը (մասնագիտությունը)

Ռիտա Գրիգորյան , միջազգային համագործակցության բաժնի գլխավոր մասնագետ

Լիլիթ Երեմյան, սակագնային քաղաքականության վարչությանսակագնային բաժնի գլխավոր մասնագետ

Անուշիկ Աղինյան, իրավաբանական և լիցենզավորման վարչության իրավաբանական և դատական սպասարկման բաժնի գլխավոր իրավաբան

(*թվարկել՝ պատվիրակություն գործուղելու դեպքում*)

4. Գործուղման վայրը՝ Տիրանա /Ալբանիա/

5. Գործուղման ժամկետները՝ 28.01.2024-01.02.2024թթ.

6. Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը

1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը

2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը՝

(*ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան*)

(*ընդգծել ծախսերի փոխհատուցման տարբերակը*)

□ ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը

□ բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն

Ծախսի տեսակը		*Ռիմա Գրիգորյան*	*Լիլիթ Երեմյան*	*Անուշիկ Աղինյան*	**Ընդամենը** (հազ. դրամ)
Ճանապարհածախս	Ավիածառայության տեսակը (էկոնոմ դաս, բիզնես դաս)				
	Ավիատոմսի արժեքը (դրամ)				
Գիշերավարձ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով)				
	Վճարը 1 օրվա համար (դրամ)				
	Օրերի քանակը				
	Ընդամենը (դրամ)				
Օրապահիկ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով)				
	Վճարը 1 օրվա համար (դրամ)				
	Օրերի քանակը				
	Ընդամենը (դրամ)				
Այլ ծախսեր	Հակահամաճարակային նմուշառումների վճար				
	Մուտքի արտոնագրի վճար				
	Այլ ծախսեր (*նկարագրել*)				
Ընդամենը ծախսեր (հազ. դրամ)					

Գլխավոր ֆինանսիստի ստորագրությունը,

02.02.2024թ.

(հավելվածը լրաց. 23.03.23 N 326-Ն)